ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 17

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորատի 27.08.2019թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 15 (տասնհինգ) անդամից 13-ը (տասներեքը):

Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ
2. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
3. Վ. Խաչատրյան՝ արհեստակցական կազմակերպության նախագահ,
4. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
5. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
6. Թ. Խաչատրյան՝ գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն,
7. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրեն
8. Բ. Պողոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան
9. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
10. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
11. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտութ. և իրավունքի ֆակուլտետի դեկան
12. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
13. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

1. ՇՊՀ-ի առկա ուսուցման համակարգում 2019-2020 ուստարում դասընթացների կազմակերպման ու կանոնակարգման նպատակով ժամատախտակի և հերթերի հաստատման մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝ Ն. Ավետիսյան

ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ-ի առկա ուսուցման համակարգում 2019-2020 ուստարում դասընթացների կազմակերպման ու կանոնակարգման նպատակով ժամատախտակի և հերթերի հաստատման մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կողմից կազմվել է 2019-2020 ուստարվա ժամատախտակը (կցված է արձանագրությանը):

2019-2020 ուստարվա բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորողների դասապրոցեսը սկսել սեպտեմբերի 2-ին, առաջին հերթի դասերը սկսել ժամը 9.00-ին:

Նկատի ունենալով մասնագիտական առանձնահատկությունները ռազմական ամբիոնում դասապրոցեսը սկսել ժամը 9-30-ին (առավոտյան 9.00-ին տողանի անցկացման պատճառով), ինչպես նաև մանկավարժության ֆակուլտետի «ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա» մասնագիտությամբ սովորողների դասապրոցեսները կազմակերպել միայն առաջին հերթով:

Տիկին Ավետիսյանը առաջարկեց, որ նոր ուսումնական տարում աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով համահամալսարանական առարկաների դասացուցակների կազմման գործընթացները հանձնարարել ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փորձառու աշխատակցին, որից հետո միայն կազմվեն համապատասխան ֆակուլտետների դասացուցակները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կողմից ներկայացրած 2019-2020 ուստարվա ժամատախտակը (կցված է):

1. 2019-2020 ուստարվա բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորողների դասապրոցեսը սկսել սեպտեմբերի 2-ին, առաջին հերթի դասերը սկսել ժամը 9.00-ին:

2. Նկատի ունենալով մասնագիտական առանձնահատկությունները,ռազմական ամբիոնում դասապրոցեսը սկսել ժամը 9-30-ին (առավոտյան 9.00-ին տողանի անցկացման պատճառով), մանկավարժության ֆակուլտետի «ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա» մասնագիտությամբ սովորողների դասապրոցեսները կազմակերպել միայն առաջին հերթով:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Թ. Խաչատրյանն առաջարկեց բոլոր ֆակուլտետների դասացուցակները տեղադրել համալսարանի կայքում, ուսանողների և դասախոսների ժամանակի արդյունավետության և օգտակար աշխատանքային գործունեության տեսանկյունից: Պարոն Սերոբյանը նշեց, որ ինքը սկզբունքորեն դեմ չի ու արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն Հ. Մելքոնյանին հանձնարարեց զբաղվել այդ հարցի լուծմամբ:

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Ռեկտորի խորհրդական՝	Ս. Շահպարոնյան
Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան
Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրեն	Ն. Ավետիսյան
Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան՝	Բ. Պողոսյան
Հումանիտար գիտությունների և	

արվեստի ֆակուլտետի դեկան՝	Թ. Մելիքյան
Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝	Ռ. Մարդոյան
Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝	Օ. Հովհաննիսյան
Ռազմական ամբիոնի պետ՝	Ա. Մկրտչյան
Անձն.կառ.նիրավ.ապահովման բաժնի վարիչ՝	Ա. Հովհաննիսյան